ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 10

14.08.2017թ. կնքված N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/4 գնման պայմանագրի

ք. Երևան 05 .10.2020թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ-ն (այսուհետ՝ Կապալառու)՝ ի դեմս ընկերության տնօրեն Հ. Մնացականյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 24.09.2020թ. N 1589-Ն որոշումը և ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքների իրականացման համար Կողմերի միջև 14.08.2017թ. կնքված N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/4 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.4 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Ուժը կորցրած ճանաչել Պայմանագրի 31.01.2020թ. կնքված N 9 համաձայնագիրը:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,	ք. Գավառ, Անդրանիկի 5
կառավարական տուն 3	<<Արմսվիսբանկ>> ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 2500010066920100
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 08404037
Հ/Հ 900011012599	
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Ա. Մկրտչյան	_____ Հ. Մնացականյան
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.